ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԼՈՎԵՆԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Սլովենիայի Հանրապետության կառավարությունը (այսուհետ՝ Պայմանավորվող Կողմեր),

վերահաստատելով իրենց պետությունների և բնակչության միջև բարեկամական հարաբերությունները,

ցանկանալով զարգացնել տնտեսական համագործակցությունը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում՝ հավասարության, փոխշահավետության և փոխադարձության հիման վրա,

հաշվի առնելով երկկողմ առևտրի ծավալների ավելացման փոխշահավետությունը և ցանկանալով ամրապնդել այդ կապերը, հատկապես երկկողմ առևտրի խթանման և տնտեսական կապերի և համագործակցության սերտացման միջոցով,

հաշվի առնելով միջազգային պայմանագրերով իրենց պետությունների ստանձնած պարտավորությունները,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Պայմանավորվող Կողմերը, իրենց ազգային օրենսդրությունների և ստանձնած միջազգային պարտավորությունների և համաձայնագրերի համաձայն, կգործադրեն իրենց ջանքերը փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող բոլոր ոլորտներում տնտեսական փոխշահավետ համագործակցության զարգացման և ուժեղացման նպատակով:

Հոդված 2

Պայմանավորվող Կողմերը կստեղծեն բարենպաստ պայմաններ տնտեսական համագործակցության ընդլայնման համար, մասնավորապես.

- տնտեսվարող սուբյեկտների միջև գործարար շփումների ընդլայնման և նոր կապերի ստեղծման խթանմամբ,
- ներդրումային գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմամբ,
- գործարար և տնտեսական տեղեկատվության փոխանակման դյուրացմամբ,
- տոնավաճառների, ցուցահանդեսների, գիտաժողովների և այլ միջոցառումների կազմակերպման օժանդակմամբ,
- երկու երկրների տնտեսական դաշտը կանոնակարգող օրենսդրության վերաբերյալ տեղեկատվության փոխանակման դյուրացմամբ,
- փոքր և միջին ձեռնարկատիրության և ներդրումային գործունեության ոլորտներում իրենց համագործակցությունը տարածելով,
- ապրանքների և ծառայությունների առևտրի խթանմամբ, ինչպես նաև արդյունաբերության, ենթակառուցվածքների, հեռահաղորդակցության, տրանսպորտի, բնության պահպանության և զբոսաշրջության ոլորտներում երկարատև համագործակցության հաստատմամբ:

Հոդված 3

Այս նպատակով Պայմանավորվող Կողմերը կստեղծեն հայ-սլովենական Միջկառավարական Հանձնաժողով, որը կգբաղվի սույն Համաձայնագրով նախատեսված ոլորտներով, ինչպես նաև

- տնտեսական համագործակցության հետագա ընդլայնման հնարավորությունների ուսումնասիրմամբ և դրանց հետագա զարգացմանն ուղղված առաջարկությունների մշակմամբ,
- երկու երկրների տնտեսվարող սուբյեկտների միջև համագործակցության ընդլայնման համար առաջարկությունների մշակմամբ,
- երկու երկրներում տնտեսական վիճակի, իրավական կարգավորման, տնտեսական ծրագրերի և ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության փոխանակմամբ,
- տնտեսական համագործակցության և երկկողմ առևտրի զարգացմանը խոչընդոտող խնդիրների վերհանմամբ և դրանց լուծմանն ուղղված առաջարկների մշակմամբ:

Հոդված 4

1. Միջկառավարական Հանձնաժողովը բաղկացած կլինի Պայմանավորվող Կողմերի ներկայացուցիչներից և անհրաժեշտության դեպքում՝ այլ պետական և մասնավոր կազմակերպությունների ներկայացուցիչներից:
2. Պայմանավորվող Կողմերը կհաստատեն Միջկառավարական Հանձնաժողովի Կանոնակարգը առաջին նիստի ընթացքում:

Հոդված 5

1. Միջկառավարական Հանձնաժողովի նիստերը կգումարվեն տարին մեկ անգամ, կամ, անհրաժեշտության դեպքում՝ Պայմանավորվող Կողմերից որևէ մեկի նախաձեռնությամբ:
2. Միջկառավարական Հանձնաժողովի նիստերի անցկացման ժամկետները և օրակարգը կփոխհամաձայնեցվեն Պայմանավորվող Կողմերի միջև:
3. Միջկառավարական Հանձնաժողովի նիստի արդյունքում հյուրընկալող Պայմանավորվող Կողմի կողմից ձևակերպվում է Արձանագրություն, որը ստորագրվում է նիստի ավարտին՝ երկու պատվիրակությունների ղեկավարների կողմից:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Պայմանավորվող Կողմերի կնքած այլ միջազգային պայմանագրերից, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների անդամակցությունից բխող իրավունքների և պարտավորությունների վրա: Սույն Համաձայնագրի դրույթները չեն ազդում Սլովենիայի Հանրապետության՝ Եվրոպական Միության անդամակցությունից բխող պարտավորությունների վրա:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Պայմանավորվող Կողմերի՝ դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին դիվանագիտական ուղիներով վերջին ծանուցագրի ստացման երեսուներորդ օրվանից:

2. Սույն Համաձայնագիրը կնքվում է երեք տարի ժամկետով և ինքնաբերաբար կերկարաձգվի հաջորդ եռամյա ժամկետով, մինչև Պայմանավորվող Կողմերից մեկը գրավոր չծանուցի մյուս Պայմանավորվող Կողմին սույն Համաձայնագրի գործողությունը դադարեցնելու մասին իր մտադրության վերաբերյալ դրա գործողության ավարտից նվազագույնը 6 ամիս առաջ:

3. Պայմանավորվող Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ:

Կատարված է Երևանում, 2010 թվականի հոկտեմբերի 11-ին, երկու բնօրինակով, յուրաքանչյուրը հայերեն, սլովեներեն և անգլերեն լեզուներով, ընդ որում, բոլոր տեքստերն էլ հավասարազոր են: Մեկնաբանման ժամանակ ծագած տարաձայնությունների դեպքում գերակայում է անգլերեն լեզվով տեքստը:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 2011թ. մարտի 24-ին